

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցիտով:

Յայտարարութիւնների համար վճարում էր իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀիՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱՅԷ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1901 ԹԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-Դ ՏԱՐԻ)

ԻՐԱԿԱՆՆԵՐՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ամեն օր բացի տօն օրերէն յաջորդող օրերէն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տարեկան մէկ եւ տասնամասկանը՝ 9 ռ., ինչ եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԵՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱՏԱՐԱԿԱՆԸ (Բաղադրանայ եւ Բարձրակարգ փողոցներէն անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լիցիտներով:

Ա. Պ. Ա. Ռ. Ի. Կ. Բ. Ա. Ժ. Ա. Ն. Ո. Ր. Դ. Ա. Գ. Ր. Ո. Թ. Ի. Ե. Զ. Է. Ը. Ն. Դ. Ո. Ի. Ն. Վ. Ո. Ի. Մ.

ԲՈՎԱՆԵՐԱԿՈՒԹԻՒՆ

Եղբայրակցութիւն եւ գործակցութիւն. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ամենամեծ մարդասէր ծնունդը. Վրաց թատրոն. Նամակ Բաթումից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. — Հեռագրութիւն. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Խրեմ. Որբի ճրագրութիւն:

ԵՂԲԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Քանի որ դարձ կոչում է մեզ գործելու: Սկսեց մեր աշխատանքը ապագայի յոյսերով, ոսկէ երազներով:

Մեր առջ զրոյթ է կովկասը իր բազմաթիւ կարիքներով, մի մերին աստիճանի հետաքրքրական երկիր թէ իր բնութեամբ, թէ իր պատմական ալեկոծ կեանքով եւ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Խ Ի Ղ Ճ Ը

Ճրագրութիւնը էր... Գրիտոսեանայ աշխարհը տօնում էր այն մեծ վարդապետի ծնունդը, որ անընդհատ քարոզում էր «Օգնութեան հասէք թշուառներին»:

Սրբնայ կառքը կանգ առաւ առաջ եկեղեցու դռան առաջ. վրայ իջաւ թանգազին մուշտակի մէջ փաթեցված ինքնագիր 2. աղան, եւ ձեռքը մեկնելով կառքից իջեցրեց չքեղ հագնված հայտաւ կնոջը: Ծուրար մինչեւ մարդու ոտկոթները թափանցելու չափ զգալի էր: Նրանք մտան եկեղեցու դարձիւր: Զանապարհի երկու կողմում շարված եւ ցնցոտիների մէջ կուշ եկած սրբաբան մարմինները, նրանց ստուած դէմքերը եւ ողորմութիւն միմիջացող կապտած շրթունքները չը տեսնելու համար ամուսինները, գուրեմները թաղանթով մուշտակի օձիքի տակ, մօտեցան եկեղեցու չէմքին: Մուտքի մօտ խնայած ամբողջ միմեանց հրելով ճանապարհ բացեց երջանիկ զոյգի համար:

Եկեղեցու անհամար մոմերի բոցիկներն էին պսպղում: Բարեպաշտ մարդիկ առատօրէն թափում էին երէցփոխի սեղանի վրա արծաթի զրամներ, երկու ամուսինները նոյնպէս մօտեցան երէցփոխի սեղանին եւ նրա վրա դնելով առանձին-առանձին մի մի ոսկի, ահագին խուրճ մոմերն առած՝ ամբողջ պատուելով, մօտեցան սեղանին: Շատերի աչքերը դէպի նրանց դար-

թէ իր բազմաթիւ ազգութիւններով, որոնց ճակատագիրը խմբել-հաւաքել է մի երկրում: Զանազան ազգացութիւնների տակ այդ ազգութիւնները իրանց պատմական անցեալից ժառանգել են հազար տեսակ աւանդութիւններ եւ կուլտուրական առանձնայատկութիւններ, որոնց շնորհիւ երկիրը ստացել է մի ազգաբնակչութեան մոլեգնութիւնը:

Կովկասը պարունակում է իր մէջ երկրաբանական բազմաթիւ գոտիների մեծ մասը: Նա իր տափարակներում եւ ծովափներում ներկայացնում է մեր առաջ տաք հարաւը իր կիզի արեգակով եւ հարաւի արդիւններով, իսկ լեռնազառքներում՝ ցուրտ հիւսիսը իր մշտական սառնամանիքներով եւ անհայ ձիւներով: Լեռնային շրջանում, սարահարթներում, ձորերում եւ հովիտներում նա բաց է անուամբ մի հազարաւոր բազմաբնակչութիւն հողի եւ նրա վրա բուսնող բազմաթիւ արմատների:

ձան: Մօտեցաւ քահանայ, քահանայի մէջ չողողացին երկու ոսկիներ. չուկ բարձրացաւ, ամենքը խօսում էին նրանց առատաձեռնութեան եւ բարեպաշտութեան մասին:

Եկեղեցին արձակվեց, նոյն բաղադրող զուգը դուրս եկաւ եկեղեցուց հետաքրքիր հայեացքների ուղեկցութեամբ, փոքրիկ արծաթազրամներ էր չարտում դէպի արմունջները, առանց նայելու թէ որտեղ են ընկնում նրանք, կառքը սլացաւ եւ մի քանի րոպէս կանգ առաւ գլխաւոր փողոցի եղբայրների մի զեղեցիկ շինութեան առաջ: Փողոցի երկարութեամբ բուր լուսամուտներից նկատելի էր չքեղ լուսաւորութիւն. սեփականութեամբ տիրում էր մեծ շարժում եւ տօնական հանդիսաւորութիւն: Զառան ներս մտաւ, դռները աղմուկով փակվեցին: Ամբողջ երկիրը նրանք այդպէս փակ ու անմատչելի էին...

Փողոցի ճրագից ծուխ արձակող փողոցի լոյսը հազիւ տեսնելի էր դարձնում ծխից սեւացած մերկ պատերը եւ առատաղը. փողոցի, բայց առանց փեղկերի, լուսամուտը ծածկված էր լաթերից միմեանց քաշալած մի շնորհով, դռան ճեղքներից փչում էր անասունի մի ցուրտ: Սառը յատակի վրա մի գզգզված վերմակի տակ հաղիւ չնշում էր աչքերը հանգած եւ մահկան դեղնութիւն ստացած մի դէմք: Մի փոքր հեռու, երկու կիսամերկ մանուկներ, մօր կրծքից քաշել ընկած, աղաղակում էին գաղցած ենք, մայրիկ, հաց... Իսկ մայրը լուռ էր, նա ոչինչ չէր զգում...

Տեսարանը սարսափելի էր... Յանկարծ դու-

Այդ երկրի մէջ ապրող ազգութիւնները, պատմական հանգամանքների շնորհիւ, ներկայանում էին մեր անցեալում ոչ թէ խոր մի երկրի ժողովուրդ, որոնք պէտք է անկէրն եղբայրաբար ընդհանուր քաղաքացիական կեանքի համար, այլ գտնվում էին մշտական ինքնամոլութեան եւ ընդհանուր ներքին մէջ: Ազգութիւնները միմեանց հաւաքում էին, միմեանց ճնշում, միմեանց կողոպտում: Երկրի մէջ խաղաղութիւն չը կար եւ խաղաղ կուլտուրական կեանքը դարձել էր անկարելիութիւն: Իւրաքանչիւր ազգութիւն աւելի ու աւելի կղզիանում էր, առանձնանում եւ աշխատում ազատ մնալ օտար ազդեցութիւնից: Եւ ահա այսօր մենք տեսնում ենք, որ մեր երկրի մէջ միմեանց մօտ ապրում են բազմաթիւ ազգութիւններ, որոնք միմեանց չեն ճանաչում եւ չեն հասկանում: Մեր երկրի մէջ կան ներկայումս՝ ռուս, հայ, վրացի, յոյն, թուրք, քիւրդ, թաթ, ասորի, ուզի, լեզգի, օս, աւար, լաք, կուրդիսի, բօթլիսի, մեց, չեչեն, խինալուգ, արաւաղ, արաղ, չերքեզ, կարաչայցի, նոցայ, դալմալս եւ ուրիշ մանր մուկ ազգաբնակչութեան տարրեր, որոնց վրա պէտք է աւելացնել գերմանական գաղութականներին, մօրզա աղանդաւորներին, մօլդավացիներին եւ այլն:

Գուցէ ոչ մի տեղ այնքան կարեւոր չէ համերաշխութեան եւ եղբայրակցութեան ջերմ քարոզը, որքան մեր երկրում: Այն տեղերում, ուր ապրում է միապաղաղ, միատեսակ ժողովուրդ եւ ամբողջ անցեալը եւ ներկան գտնվում են միմեանց ազգութիւններից, որտեղ միմեանց ինքն կարեւոր էր, նրանց կարեւոր էր միմեանց ինքն կարեւոր էր եղբայրութիւն եւ միութիւն: Իսկ այդպէս չէ եղել այն երկրում, որտեղ մենք ենք ապրում եւ որտեղ շատ ուժեղ է իւրաքանչիւր ազգութեան ճիգը՝ կղզիանալ, փակվել, առանձնանալ եւ իրան օտար զգալ դէպի միւս տարրերը:

Թող ոչ ոք չը կարծէ թէ որ եւ չէ ազգութիւն, համայնք, ազգաբնակչութեան տարր կարող է առաջ դնալ, երբ շրջապատող միւս տարրերը, հարեանները, մասնակից չեն առաջարկութեան գործին: Այն ժամանակ մէկի ջանքերը թուլանում եւ ոչինչանում են միւսի կաշկանդութիւններից: Ազգերի խորթութիւնը եւ թշնամութիւնը՝

որ բացվեց, ներս մտաւ հնացած չուխով եւ մորթի դրակով, դէմքի վրա անհուն վիշտ կրող մի մարդ: Նա ոչինչ չը խօսեց, այլ շտապով չուխի տակից դուրս քաշեց մի կապոց, առաջ եկաւ, դրեց քրքրված կապեռի ծայրին կապոցը եւ անհետացաւ: Նա չէր քայլում, այլ վազում էր: Մի փոքր հեռուութեամբ, մօտեցաւ մի աղքատիկ տան, կանգ առաւ այնտեղ, աւանջը մօտեցրեց դռան եւ ապա, հրելով դուռը, ներս մտաւ ու անմիջապէս էլի դուրս եկաւ:

Նորից շտապեց, նորից մօտեցաւ աղքատիկ դռներին, ներս մտաւ, դուրս եկաւ, այնքան, մինչեւ որ նրա կապոցները սպառնային: Բայց նա դարձեալ կանգ չառաւ, ճանապարհը փոխելով մտաւ այս անգամ գլխաւոր փողոցը: Նրա քայլերը ուղղվեցին դէպի փողոցի չարքից յետ մնացած մի աղքատիկ տուն: Մօտեցաւ թղթով պատած փողոցի լուսամուտին եւ նրա ականջին հասան մանկական լացի ձայներ: Մայրական զթոտ փաղաքանքները անդր էին մեղմանելու այդ յուսահատ ճիչերը: Երբ կին եւ չորս երեխաներ դռն աղքատութեան մէջ. այդ նշանաւոր օրը նրա օջաղը չէր ծխացել, իսկ երեխաները կերակուր էին ուզում... Անդադար շտապող մարդը շուտ եկաւ, շտապով հասաւ մեզ ծանօթ եղբայրների տուն: Դռները գոց էին: Նա մօտեցաւ մի այլ չեղ տան, դռները նոյնպէս փակ գտաւ:

Չայրթը թափում ու վրա արեց նրա սիրտը. եւ, երեսը դարձնելով այդ անհիւրասէր չեչենքից, մօտեցաւ մի անշուք տան: Տունը աղքատիկ, բայց դուռը բաց... Նա ներս մտաւ, մի

այն խոշոր եւ էական սխալներից մէկն է, որ մեզ թողել է անցեալ պատմութիւնը: Ազգերը չեն հասկացել համերաշխութեան գաղափարը եւ այդ պատճառով նրանցից ոչ ոք էլ առաջ չէ դնացել: Միմեանց խառնաբախելով իւրաքանչիւր ազգ արգելք է դարձել եւ իր զարգացման ու բարգաւաճման:

Անցեալը անցաւ: Ներկայի բազմաթիւ կարիքների առաջ, խելացի եւ ընդարձակ քաղաքացիական կեանք ստեղծելու պահանջների առաջ, մենք պարզեցրեց եղբայրակցութեան եւ ընդհանուր գործակցութեան գործալը, օգնելով միմեանց ուսումնասիրելու մեր հողեկան եւ նւթական կարիքները եւ միջոցներ մշակելու՝ նրանց բաւարարութիւն տալու նպատակով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՄԵՇ ՄԱՐԴԱՍԷՐԻ ԾՆՈՒՆԴԸ

Խորհրդաւոր չէ, ընթերցող, տարվայ այն ժամանակը, երբ մենք տօնում ենք մարդասիրութեան վեճ ծնունդը:

Նայեցէք ձեր չորջուր: Մեռած է բնութիւնը, նրա մէջ չը կայ յուսատու, փայփայող ոչ մի յատկութիւն: Գարնան կամ ամառայ ժամանակ, երբ աշխարհի վրայ ծանրանում է ձեր հոգու վրա, սկսում է խեղդել ձեզ, շատ անգամ բնութիւնը դառնում է բուժիչ: Դեռ ներքին վէճերը: Մի որ եւ է թոյնակի երգ, մի որ եւ է ծաղիկի զոյն, մի որ եւ է դալար թուփերի կարող է հանդիսանալ ձեզ, մոռացնել տալ ցաւը, հաշտեցնել աշխարհի հետ:

Իսկ այժմ:

Ձիւն, ցուրտ, մեռելային լուսնի ամեն տեղ: Աչքը անհիւրասէր երկրի տակ չէ տեսնում մի բան, որով կարելի լինէր ուրախանալ:

Դուք հագել էք տաք չորեր, ամեն զգուշութիւն գործ էք դնում, որ չը միսէք: Եւ իրաւունք ունեք, ինքն պարտաւորութեան զգացմունքը յատուկ է բոլոր կենդանիներին: Զմեռը պէտք է պաշտպանել: Ծարվայ այս եղանակը անող է. նրա համար չը կայ որք ու աղքատ, տկուր ու քաղցած. ոչ ոքին չէ խնդում եւ պատասխարելու, յուսալքելու, ապրեցնելու ոչ մի հնարաւորութիւն էր տալիս իր կամքով, ինքնաբերաբար:

արհեստաւորի ընտանիք, սեղանի չորջուրը բուրած՝ ընթրում էր: Օտարի յայտնվելը բոլորովին չը զարմացրեց ընթրողներին: Իր քրքրաւոր վատաւար ապրողը այդ հանդիսաւոր օրում պարտք էր համարում իր աղքատիկ սեղանից բաժնի հանել նաեւ կարօտեալին: Բայց օտարականը հրաժարվելով սեղանից, խնդրեց մի բաժին՝ տուն տանելու համար եւ տանտիկնոջ ձեռքից ընդունելով մի ծանր կապոց, շնորհակալութիւն յայտնելով դուրս գնաց:

Նա վերադարձաւ կրկին նոյն տունը, որտեղից նոր հեռացել էր: Կրկին նրա ականջին հասան մանկական լացի ձայները եւ մայրական անգոր փաղաքանքները: Շտապով դուռը բացեց եւ մտաւ. ճրագի լոյսը սպառնալու վրա էր: Գրգռանք հանեց մօմի մի կտոր, վառեց եւ կապոցի հետ պարզելով ապշած մօրը՝ դուրս եկաւ:

Նորից վազեց, նորից մտաւ մի տուն եւ դուրս եկաւ կապոցը ձեռքին, դարձեալ շտապեց, բայց այս անգամ շատ հեռու... Նոր թաղում, քաղաքի այդ խուլ անկիւնում, թէեւ սեփական, բայց պարտքի տեղ արդէն գրված, հոմալ աղբանքից թաղ տուած նկուղում երեք բոլորովին որք մնացած թոռների հետ քարշ էր տալիս իր սեւ օրերը ծերութիւնից զգալաւորանքները կորցրած պատաւ: Մաքաւր. Անծանօթ կապոցը ձեռքին ներս մտաւ այն միջոցին, երբ կոյր պատաւը չօջախիլով ծնկան վրա դրած երկու տարեկան թոռան բերանը, նրա բերանին մօտեցնում էր փոքրիկ Եղանի մուրալցած չոր հացի փշրանքները:

Անծանօթը կրկին դուրս եկաւ, կրկին շտա-

Մի կատարեալ պատիժ մերկութեան, աղ-
քատութեան համար—հա՛մ ինչ է ձմեռը։ Տեսէ՛ք
որքան շատ են հիւանդութիւնները, տեսէ՛ք
ինչպէս են ամեն օր գերեզմանատուն ուղե-
ւորվում դիակներ, դիակներ իսկուհի։ Մահը
ամենքի համար է, բայց առաւելագէտ աղքատ-
ների համար։ Քանի՜ներն են կորչում անժա-
մանակ, քանի՜ներն են տանջվում հիւանդու-
թիւններով, կեցութեան սոսկալի պայմանների
պատճառով։ Չմեռվայ սկզբից մի հեծեծանք է
սկսվում աղքատի խրճիթում ու անընդհատ
ձգվում է մինչև գարնան մուտքը։

Եւ այսպիսի ժամանակ մենք տօնում ենք
մարդասիրութեան ծնունդը։

Որքան սքանչելի տնօրինութիւն։ Յրաից
կուշ եկած, մրսելով մենք գնում ենք մեր
քրտառնէական պարտքը կատարելու։ ձմեռ-
ային այս տխուր ու վատեցուցիչ օրերին մեզ
համար մի անասելի երջանկութիւն է լսել ու
տեսնել, որ չէ մոռացվել ու չի մոռացվել այդ
մեծ, հուշակաւոր տօնը, երբ մեզ աւետում են,
թէ ծնվեց այն հրաշալի մանուկը, որի առաջին
և վերջին խօսքն էր. «Մի եղբէք միմեանց»։

Այո, սէր... Եւ կը հալեցնէ ձմեռնային այս
դաժան սառնամանիքները. նա միայն կարող է
սառած բնութեան մեռցնող ծոցում ստեղծել
զարնանային սիրուն օրեր, երբ մերկը, որ-
բիւր, ցաւերով բեռնաւորված տնանկը ժպտուն
և ուրախ կը լինեն, կիմանան, որ ապրելը
հեշտ է։

Սիրեցէ՛ք միմեանց...

Առանց այդ սիրոյ դժուար է աշխարհը, եւ
եթէ նա այժմ արքայութիւն չէ, պատճառն այն
է, որ սէրը լոկ բառ է մեզանում եւ ոչ թէ
գործ։

Ահա դուք գնում էք տօնելու մարդասիրու-
թեան ծնունդը։ Ոչինչ չէք մոռանում։ Պապերից
ու նախապապերից դուք ժառանգաբար, սե-
րունդից սերունդ ստացել էք ուսուիրքների եւ
խմելիքների մի ցուցակ եւ ձեր սուրբ պարտա-
կանութիւնն էք համարում ոչինչ չը պակասեց-
նել այդ ցուցակից, ամենայն բարեխղճութեամբ
ծանրաբեռնել ձեր սեղանը։ Դուք կուտէք որ-
քան կամենում էք, կամ կարողանում էք։ Դուք
փող չէք խնայի. եկեղեցում կանոնք հաստ,
ոսկեզօծ մամբը, կը ծեծէք ձեր կուրծքը, կը
սքանչանաք արարողութիւններէ։

Միւս օրը, երբորդ օրը նոյնպէս։ Դուք կուշտ
ու զոհ էք։ Տօները լաւ վերջացրէ՛ք։

Բայց դա լոկ ծէս է, ընթերցող. դուք կե-
րաք, ապրեցի՛ք ձեզ համար։ Միթէ այդ պիտի
լինէր մարդասիրութեան ծնունդի զարդա-
րանքը...

Մտածեցէ՛ք։ Անմարդաւեր, ցուրտ ու քարա-
ցած նբտով մարդասիրութիւն տօնել—դա ծաղի-
ք է, դա յանցանք է։ Ինչ կասե՛ք դուք, եթէ
մարդակեր վայրենին ֆրակ հագած, ձեռքերն
ու բերանը մաքուր լուայած՝ մտնէր այն ժո-
ղովը, ուր խօսում են մարդկային արժանաւո-
րութիւնների, մարդու պատուի, իդէալական
կեցութեան մասին։

Կեց, բայց մի քանի քայլի վրա նրա ականջին
հասան սիրտ կտրատող լացի ձայներ։ Այս ան-
գամ լացում էր վիշտը. նա մօտեցաւ մի գոմի,
դռան ճեղքերից ներս նայեց. այնտեղ ապրում
էր մի պաղթական ընտանիք։ Հաստ ու ցուրտ
պատերի մէջ, ազատ լոյսի տակ, պատառոտած
վերմակում միմեանց փաթաթված եւ քուն
մտած երկու քոյրերի մօտ իրանց սեւ օրն էին
ողորմած մայրը եւ չափաւաս աղջկան։ Նրանք
կիշտը խոր էին, անպատկառ նրանք ողորմ էին
կորցրած վաթմանը, աւերված օջաղը, քրդի սը-
բից ընկած տղամարդկանց, նրանց ողբը այն-
քան աղէկաւոր էր, որ ծակեց ու անցաւ ան-
ծանօթի օրտի մինչև խորքը. նա բացեց դու-
ռը, մօտեցաւ լացող կանանց. նրա աչքերից
զլորվեցին արտասուքն մի զոյգ կաթիլներ...

Նա հեկեկաց... եւ ապա կուրծքը ծուռաւորով
գլխից, խիղճ—աղաղակեց եւ դուրս պրծաւ...

— Խիղճ... միթէ դեռ եւս գոյութիւն ունի
խիղճը, միաժամանակ բացականչեցին մայր եւ
աղջիկը...

Իսկ այդ միջոցին խիղճը արդէն անհետա-
ցել էր...

Կէս գիշեր եղաւ, ամբողջ քաղաքը ճնցի,
բայց խիղճը, ցուրտն ու քաղցը մոռացած, դեռ
եւս թափառում էր փողոցներում եւ չուտ-
չուտ մօտենալով աղքատիկ դռներին երկար
միջոց ականջ էր դնում եւ մի մի արտասուք-
ներ կաթեցնելով այդ անուշ չէսերի վրա,
անհետանում էր։

Յովն. Տէր Մարտիրոսեանց

Մենք մեր տներում դարած ձկներով, մեր
տապալակներով, թխուածքներով, մեր լիքը չի-
շերով ոչինչ ուրախութիւն, ոչինչ ջերմութիւն
չենք մտցնում ձեռնային դաժան բնութեան
մէջ։ Ել ինչու համար է այսպիսի օրերում տօն-
վում ամենամեծ մարդասիրի ծնունդը։ Միթէ
գոնէ մի քանի օր մենք չը պիտի ըմբռնեք
նրա իսկական նշանակութիւնը։ Միթէ մարդա-
սիրութիւնը մենք միմիայն մեր զարդարած սե-
ղանների վրա պիտի տեսնենք։

Ո՛չ, ընթերցող. Յիշեցէ՛ք մարդկանց, յիշեցէ՛ք,
որ պէտք է սիրել մարդկանց։

Հին, խաբխուր օրջերում, ձեր աչքերից հե-
ռու, դժբախտութեան ծովերի մէջ հեծում է
մերկութիւնը. նա անմիթթար է, նա այս րօ-
պէին դառն իրականութեանց այն յուսահատա-
կան կարծիքն է կազմել, թէ աստուածութիւնը
թշնամի է նրան, այդքան տառապանքներ թա-
փելով նրա վրա։

Միթէ այդպէս է։

Ցուրտ է, շատ ցուրտ. մարդիկ ստուշում են,
մարդիկ ընկած են անդուս ներքնայարկերում,
մեռնում են սովից։

Այսօր դուք պարտաւոր էք օգնել նրանց,
Այսօր, որ մի մոռացէ՛ք, մարդասիրութեան ծը-
նունդն է...

Լ.

ՎՐԱՅ ԹԱՍՏՐՈՆ

Երեքշաբթի, յունվարի 2-ին, վրաց դերա-
սանական խումբը տօնեց վրաց թատրոնի հիմ-
նարկութեան տարեդարձը։ Ինչպէս յայտնի է,
առաջին վրացերէն ներկայացում կայացել է
1850 թվ. յունվարի 2-ին, իշխան Վորոնցովի
ժամանակ։ Իշխանի ցանկութեամբ՝ Գիօրգի
Էրիսթով գրել է վրաց բեմի համար մի քանի
պիէսներ, որոնցից մէկն ու մէկը կրկնվում է
այդ օրը։

Այս անգամ խաղացին նոյն հեղինակի «Վէճ»
կօմիդիան, որը նրա առաջին փորձերից մէկն
է։ Նոյն օրը խաղացվեց այդ յօբելանի առի-
թով պ. Ումիկալիլիի գրած մի պատկեր ան-
ցեալից, «Պատրաստութիւն» անունով։ Այդ
պատկերի մէջ դուրս են բերված նախկին գոր-
ծիչները, այն է՝ Կովկասի նախկին փոխարքայ
Իշխան Մ. Վորոնցով, Դիմիտրի Դիփիանի,
Գիօրգի Էրիսթով (վրաց առաջին դրամատուրգ),
Պատառն Իսուկեանի (պատմաբան), Գրիգոր
Շանչան (այն ժամանակվայ վրաց լեզուի ցեն-
զոր), Ռափայել Էրիսթով (քանաստեղծ, որ
այժմ էլ կենդանի է), Վախթանգ Օրբելեանի,
Իշխանուհի Քեթեան Օրբելեանի, որի տանը
կատարվում է գործողութիւնը։ Այս սերողները
փորձում են Էրիսթովի «Գաղաթ» պիէսը, որ-
տեղ ներկայ է ինքը՝ հեղինակը եւ սովորեց-
նում են։ Փորձի ժամանակ զարկ է իշխան Վո-
րոնցով, որի ներկայութեամբ շարունակում են
փորձը։ Իշխանը զոհ է մնում խաղից եւ ցան-
կանում է յարատեւութիւն գործին։

Այս հետաքրքրական պատկերը աւելի եւս
հետաքրքրական է դառնում նրանով, որ դե-

Ո Ր Բ Ի Զ Ր Ա Պ Ա Ն Ո Յ Ո Ղ

(Փոխ. Ֆ. Լաֆարգից)

I

Ցուրտ, քամոտ գիշերը լուսաւորվում էր
միայն ձիւնի սպիտակութեամբ, որովհետեւ
լուսինը միայն երբեմն երբեմն էր երևում,
դուրս գալով արագալսաց ամպերի տակից։
Մէզօքի առաջին հովիտների վրա տիրապետող
Վէրնէի զղեակի բարձրութիւնից, ջահէլ ա-
ղախին ժանիւնի աչքի առաջ տարածվում էր
հրաշալի տեսարան. արեւմուտքում աւազա-
բուրների կատարները, որոնց յետեւից լավում
էր մանչող ծովի ալմուկը, վառվում էին կար-
ծէք կրակ կտրած, ձգվելով խաւար երկնքի
մոտայ երեսին իրեն մի երկայն չերտ ինչ որ
լուսաւոր ժանեակի։

Ժանիւրը մի քանի րօպէ մնաց կանգնած
բակում, ականջ դնելով մօտակայ եկեղեցիների
զանգերի ձայնին եւ, մրսելով դեկտեմբերեան *)
ցուրտ քամուց, որ փչում էր ուղիղ նրա երե-
սին, յետ դարձաւ տուն, չնջալով։

— Դժուար կը լինի այս գիշեր եկեղեցի գնա-
ցողներին համար, մասնաւոր. որ երբ երկնքը
կարմրում է Սուլակի ուղղութեամբ, կը նշա-
նակի քամին հետզհետէ սաստկանալու է մի-
շեւ առաւօտ։

Ժանիւրը աղանդութեան էր մտել զղեակը
երկու տարի առաջ, առաջին անգամ Հաղոր-
դութիւն ընդունելուց անմիջապէս յետոյ։

Այժմ արդէն լրացել էր նրա տասնութըս

*) Յունիսիայից, ինչպէս եւ բոլոր եւրոպացի-
ները, Քրիստոսի ծնունդը տօնում են դեկտեմբերի
25-ին։

րասանները իրանց գրիմը բոլորովին նմանեց-
նում են այդ գործիչների պատկերներին. այդ
պատճառով էլ քաղցր է այդ յիշատակը վրաց
հասարակութեան համար, որը սիրով այդ օրը
լցնում է թատրոնը։ Բայց շատ ափսոս, որ րէ-
ժնօրը ուշադրութիւն չէ դարձնում այդ ներ-
կայացումների ճոխութեան վրա։ Այս տարվայ
տարեդարձի ներկայացումը աւելի թոյլ էր ան-
ցեալից։

Thaleia

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Դեկտեմբերի 29-ին

Դարձեալ մարդկային զոհեր... Սեւ ծովը զո-
հեր կանկուց չէ կշտանում...

Երկու օր շարունակ, դեկտեմբերի 26 եւ
27-ին, այտետղ սաստիկ քամի բարձրացաւ եւ
մեծ վնաս հասցրեց Դեկտեմբերի 27-ին, ա-
ռաւօտեան, Բաթումից ոչ հեռու, Թամարա կոչ-
ված այգու մօտ, մեծ բազմութիւն էր հաւաք-
վել, որ ականատես էր լինում մի շատ սրտա-
շարժ տեսարանի։ Մովսիսի մօտաւորապէս
200—250 մօտէն հեռաւորութեամբ դէպի ծովի
ներսը, կիսից աւելի ընկզմված ջրի մէջ եւ
ջարդ ու փշուր եղած յունական «Սերակի»
առագաստանաւը, օգնութեան դրօշակ պարզած,
շատ յուսահատական դրութեան մէջ էր։ Մօվը
այնեղծված էր եւ վիթխարի ալիքները կու-
տակվում, լեռներ էին կազմում եւ անագին
նաւը տատանւում էր տաշղի նման... Նաւի
մի ծայրում, որ կարծես անգույթ ծովը խնայել
էր, չէր ջարդել եւ ջրի տակը կոխել, այդտեղ,
այդ փաթիկ տեղում, ցրտից ու վախից կուշ
եկած խմբված էին մի քանի նաւաստիներ,
որոնք տատանվող նաւի փայտերից բռնած,
սպասում էին իրանց դառն վախճանին։ Իսկ
նաւի մէջ բեռնաւորված 50 հազար հատ նաւ-
թով լի սնդուկները լողում էին ջրի երեսին։
Ամբողջ ափից նայում էր, փորձեր էին ա-
նում ազատելու նաւի մէջ մարդկանց, ամեն
հնարք գործ էին դնում, բայց ոչինչ չէր լի-
նում, անկարող էին Մի կողմից սաստիկ ալե-
կոծութիւնը, միւս կողմից էլ ծովի մէջ կու-
տակված հազարաւոր սնդուկները, արգելք էին
լինում դրանց օգնութեան հասնելու, իսկ ներ-
սից էլ օր ու գիշեր մաքառման մէջ լինելով,
ջարդված, ուժաւատու եղած նաւաստիները,
եթէ կարողանային էլ լողալով իրանց ափը գը-
ցել, դարձեալ ծովի մէջ տալիս ու վրա եղող
սնդուկները արգելք էին լինում։

Շատ սրտաշարժ, շատ սիրտ կտրատող տե-
սարան էր ներկայացնում այն րօպէն, երբ նա-
ւաստիները նաւի մնացորդ տախտակամանից,
բոլորովին թուլացած եւ ուժաւատու եղած,
ալիքի մի ուժգին հարուածից՝ զլորվում են ծո-
վի մէջէն էին նետվում... Իսկ հեռուից, ափից
նայող բազմութիւնը արտասուք էր թափում...
Ընկզմված «Սերակի» նաւի մէջ եղել են 11
հոգի, որոնցից մի հրաշքով ազատվում է նա-
ւաստիներ, որ նոյն այդ նաւի սեփականատէն

տարին, եւ նա լուրջ էր, խելացի եւ աշխա-
տաւէր, ինչպէս մի հասած աղջիկ։

Դրա գլխաւոր պատճառն այն էր, որ ժա-
նիւնի ալիքից ոչ մի րօպէ դուրս չէր գալիս իր
մայրը, որից նրան բաժանել էր չքաւորու-
թիւնը. նրա մայրը օրավարձով բանում էր
լազուական, եւ օրավարձով բանոյի գծում
վատաւոր հնարաւորութիւն չէր տալիս այդ
խնդրէ կնոջը պահել տանը իր աղջկան։

Ժանիւրը յիշում էր սակաւ, որ իրանց հա-
մար միշտ այդքան դժուար չէ եղել ապրել աշ-
խարհիս երեսին։ Նրանք շատ բազաւոր էին,
քանի որ հեռներն էր հայրը. Հմուտ այգեգործ,
լաւ հողափոր եւ մի եւ նոյն ժամանակ փորձ-
ված պարտիզան լինելով, նա երբեք չէր
մնում առանց գործի։

Բայց նրան լալեց... պատերազմը։

Արդէն երեք տարի է, որ վերջացել է պա-
տերազմը, բայց նա չը կայ ու չը կայ։ Ոչ ոք
չը գիտէր, մեռել է նա, թէ գիտէր է ընկել
Սպանիականների մէջ նա չէր գտնվել, բոլոր գե-
րիները վաղուց էին վերադարձել գերմանական
բերդերից Ֆրանսիա, բայց նրա մասին ձայն
ձուլում չը կար։ Մայր ու աղջիկ սուգ հա-
գան։ Շատ չնայած ժանիւրը ստիպված եղաւ
աղախին դառնալ։ Այդ անհրաժեշտութիւնը ա-
ւելի եւս սաստկացրեց ժանիւնի վիշտը իր հօր
մասին, որին նա չէր մոռանում ոչ մի րօպէ
եւ միշտ յիշում էր իր ազօրքների մէջ...

II

Երեք տարվայ անջատումը չէր կարողացել
ամենեւին թուլացնել փաթիկ աղջկայ սէրը եւ

է. 9 հոգի ընկզմվելով ծովի մէջ անհետ կոր-
չում են, իսկ նաւաստիներից մէկը, ունենալով
քաջութիւն վտանգի ժամանակ գէթ օրհասա-
կան րօպէին կուշ վիթխարի ալիքները պատ-
ուկով ազատվում է։ Բայց խեղճը մի քանի
ժամից յետոյ մեռաւ, չը տեսնելով իր սիրելի-
ներին, որոնք հայրենի երկրում սրտատրոփ
սպասում են նրան։

Նոյն օրը մի աղջկաի աղէտալի դէպք էլ
պատահեց Ճորոխ գետի վրա։ Դարձեալ մի ա-
ռագաստանաւ, բեռնաւորված նաւթով լի սըն-
դուկներով, ճանապարհվում է Կ. Պօլս. Բայց
ծովի սաստիկ ալիքովութիւնը եւ անաշող քա-
մին նաւը մղում են Ճորոխի բերանը, ուր
ջարդվում եւ փչանում է։ Այդտեղ խեղդվում
է 1 մարդ, իսկ մնացածները ազատվում են։

Բնն. Մարտիրոսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունվարի 2-ին

Թէ որքան ժողովուրդ էր յաճախում ան-
ցեալ եւ նախանցեալ տարիները Վանքի մայր
եկեղեցին ներդաշնակած քառաձայն երգեցո-
ղութիւնը լսելու, այդ ամեն մէկը գիտէ, եկե-
ղեցի յաճախում էին ոչ միայն հայեր, այլ եւ
օտարադաւաններ, որոնց գրաւում էր մեր նո-
րամոյծ ներդաշնակ պատարագի երգեցողու-
թիւնը, եւ որոնք հեռանում էին մեծ բաւակա-
նութեամբ։ Բայց այս տարի ինչ ենք տեսնում
Վանքի մայր եկեղեցում վերանորոգութեան
պատճառով ժամերգութիւն չէ լինում այն-
տեղ. այդ պատճառով, թեմակալ առաջ-
նորդի կարգադրութեամբ, Ներսիսեան զպ-
րոցի քառաձայն խումբը պէտք է երգէ
ս. Նշան եկեղեցում։ Ժողովուրդը շատերը
գիտեն այս կարգադրութիւնը եւ շատերը ոչ
ժամը 10¹ չէին ս. Նշանի եկեղեցին հաւաքել
ժողովուրդի անաղին բազմութիւն. զարկն
են մտնում, մէկ րօպէ լսում եւ երբ տեսնում
են, որ միաձայն է Ներսիսեան զպրոցի խմբի
երգեցողութիւնը թողնում եւ հեռանում են,
այնպէս որ եկեղեցին նմանում է այդ րօպէին
թատրոնի, որտեղից տոմսակները առնում եւ
իսկոյն հեռանում են։ Ներսիսեան զպրոցի քա-
ռաձայն խումբը ահա ամբողջ մի ամիս է, որ
քառաձայն չէ երգում։ Ինչպէս լսեցիք դրա
պատճառն այն է, որ աշակերտները բացակա-
ւում են։ Չարմառալի չէ, որ Ներսիսեան զպ-
րոցի վարչութիւնը չէ կարողանում աշակերտ-
ներին ստիպել կանոնաւոր յաճախելու երգե-
ցողութեան։ Հրաւիրում ենք վարչութեան ու-
շադրութիւնը այս հանգամանքի վրա. հարկա-
ւոր է կարելի դարձնել, որ ժողովուրդը լսէ իր
սիրած քառաձայն երգեցողութիւնը։

Յ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է մէկ
ու կէս թերթից։

«Մշակի» հետեւեալ համարը լոյս կը տեսնի
երեքշաբթի, յունվարի 9-ին եւ այնուհետեւ
կանօնաւոր կը սկսի հրատարակվել շաբաթ
վեց անգամ։

Նա միշտ միթարում էր իրան այն յոյսով,
թէ «երբ եւ ինչ կը վերադառնայ հայրենիք»։

Եւ ինչու չը պէտք է վերադառնալ։ Չէ որ
ոչ մի ապացոյց չը կայ, թէ նա մեռել է։ Վեր-
ջապէս, չէ որ դեռ վերադառնում են Ֆրան-
սիա շատ զինուորներ, որոնց աւելի երկար են
պահել գերմանական կազմաւորում, որով-
հետեւ նրանք յանդգնութիւն էին ունեցել վեր-
ջովվել յաղթական գերմանացիների կոպտու-
թիւնից...

Նա երբեմն կարողում էր այդպիսի բաներ
հիւրասենեակի սեղանի վրա ընկած լրագրե-
րներում եւ, փայփայելով միշտ այդ յոյսը իր
մանկական սրտում, ամեն երկիւղ, աշխատանք
վերջացնելուց յետոյ, փոխանակ իսկոյն կուշ
գալու տաք անկողնում, մնում էր երկար ժա-
մանակ նստած վառարանի մօտ եւ երազում էր,
կարծես սպասելով մէկին։

Այդ օրը, Միւնխեն նախատեսակին, նա բո-
լորովին ազատվել էր աշխատանքից արդէն
ժամի եօթ եւ կէսին, որովհետեւ ճաշի տեղ
երկոյնեան ժամի հինգին հասարակ նախաճաշ
էին արել տնեցիք, սպասելով անվերջանալի
ճոխ ընթերթիւն, որ, այդ տեղի սովորութեան
համեմատ, ուտում են կէսգիշերային պատա-
րագից յետոյ։

Տէրերը եւ բոլոր սպասաւորները, բացի Ժա-
նիւնից, պառկել էին հանգստանալու, որպէս զի
առողջ վերկենային ու գնային

Թիֆլիսի պոլիցիայի տնօրէնի պաշտօնակատարը մեզ խնդրում է տպել, որ ի նկատի ունենալով Զորքնէքի ժամանակ հրացանաձգութիւնից մի քանի անգամ տեղի ունեցած դժբաղդ զէպքերը, ինքը ոստիկանութեանը պատուիրել է անպայման կերպով արգելել հրացան կամ բէ-վոլէր արձակելը յունվարի 6-ին, խաչը ջուրը գցելիս եւ այդ կարգադրութեանը չը հնազանդողներին դատի ենթարկել, իսկ զենքը գրաւել յարգունիս:

Հոգեւոր իշխանութեան հրամանով, Վանքի մայր եկեղեցու վերաշինութեան պատճառով, Զորքնէքի հանդէսը կատարվելու է 6. Նշան եկեղեցու մ. պատարագից յետոյ հանդէսը անցնելու է—6. Նշանի, էկզարչակայա հրապարակով, Բագրատիօնակայա եւ Մուխրանակայա փողոցներով դէպի Կուր գետի եզերքը:

Դեկտեմբերի 31-ին Ջէմ-Աւճալս գիւղում տեղի ունեցաւ կողմնակա ուղղիչ ապստամբանի շինութեան օրհնութիւնը, որ իր միջոցներով կառուցել է Ա. Մանթաշեան: Ներկայ էին, բացի ուղղիչ ապստամբանի ընկերութեան վարչութեան անդամներից, Թիֆլիսի նահանգապետ Ի. Ն. Սվէշին, դատաւարական աշխարհի ներկայացուցիչները եւ ուրիշ պատուաւոր անձինք: Ընկերութեան պատուաւոր անդամ Ա. Մանթաշեանի միջոցներով կառուցած տունը երկարակամ է, եւ նստել է 25 հազար ռուբլի: Մարմանքից յետոյ, Մանթաշեանի կողմից նախաձեռնող առաջարկից: Առաջին բաժնովը սենատոր Վլասովի բարձրացրեց թաղաւոր Կայսրի թանգարանի կենացը, ապա առաջարկվեցին Ա. Մանթաշեանի, նահանգապետի եւ այլ ներկայ եղողների կենացները:

Վրացիների մէջ շատ քիչ պրոֆեսորներ կան, եղածներն էլ չեն պարագայում մայրենի գրականութեամբ: Բացառութիւն կազմում է Օդեսայի համալսարանի պրոֆեսոր Վ. Պետրիաշվիլին, որի լաւօրատու հաստատվելու օրից անձեղ է 24 տարի եւ որի յօքեւանը, ինչպէս հայտնի է «Վիպլի» շաբաթաթերթում, այս յունվարի 1-ին տօնացին Օդեսայի վրացի ուսանողները: Պրոֆեսոր Վասիլ Պետրիաշվիլի յօդուածներ էր տպւում Գ. Մէրթլէի խմբագրութեամբ հրատարակվող «Վրեթե» լրագրում եւ զրանց մէջ համարձակ կերպով մասնանիչ էր անում: Ինչ անհրաժեշտ եւ վնասակար կողմերը, մի եւ նոյն ժամանակ խիստ կիրառելի էր ենթարկում վրաց նոր սերունդը: Բացի ռուս եւ օտար լեզուներով դասավանդութիւններ կարգաւոր, Պետրիաշվիլի ժամեր է գտնում եւ հարստացնում է իր մայրենի գիտական գրականութիւնը: Նրա նշանակաւոր գործերն են «Յիւնի եւ նրա խնամակալ միջոցները», «Որթը եւ նրա անցնելը», «Կաթը» եւ այլն: Այս հեղինակութիւնների միջոցով նա մեծ զարկ տուեց վրաց գիտական գրականութեան զարգացմանը: Այս պատճառով էլ պ. Պետրիաշվիլին այսօր վրաց

Ժանինը մի քանի չոր ձիւղը գցեց կրակարանը եւ նստաբանի վրա նստած մտքի հետ ընկաւ, կրակին մօտեցնելով բոլորի ոտները, որոնցից հանել էր փայտէ նոր ոտնամանները, որ այդ առաւօտ ընծայել էր նրան տիրուհին, որպէս զի Մանիան գիշերը դնէր բուխարու մօտ: Ի՞նչ է գտնելու նա վաղը առաւօտ իր ոտնամանների մէջ: Ի՞նչ է գտնելու Աստուած նրանց մէջ նրա քնած ժամանակը: Երեւի, անցնալ տարվալ նման, մի փայլուն ոսկեղեղան նա իսկոյն կտալարկի ոսկին մօրը, որ երեւի շատ նեղ գրութեան մէջ է այդ դաժան ձմեռը... Բայց որքան աւելի փափագելի էր Ժանինի համար մի ուրիշ տիրապիւղ...

III

Գամին յանկարծ սաստիկ թափով բաց արեց վատ կողպած դուռը եւ նրա շեմքում երեւաց ու կանգ առաւ մի փոքրիկ գանգրահեր ու չէկ երեխայ, հաղիւ հազ ծածկված ցնցոտիներով: Ա՛խ, կարծես հրեշտակ լինի,—բացականչեց Ժանինը.—ինչ եւ ուզում, քաղցրիկս: Երեխան թշերի վրա երեւում էին ցրտից սառած արտասու զնեք: Ժանինը նստաբանից նրան նստարանի վրա, տաքացրեց նրան, մի քանի չոր ձիւղէ էլ դրցելով կրակի մէջ, հաց բրդեց կաթի մէջ նրա համար եւ սկսեց հարց ու փորձ անել: Բայց երեխան ոչ մի բան չէր պատասխանում նրա հարցերին: Գուցէ դեռ լեզուն չէր բացվել Յիւրաւի, այնքան փոքրիկ էր նա: Բայց շատ ազատութեամբ էր ուտում Ժանինը կարկեղութեամբ էր նա-

ազդի պարծանքն է: Օդեսայի ուսանողները նրա անունով ստիպեցին հաստատեցին տեղական համալսարանում:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը իր յունվարի 3-ի նիստում որոշեց Թիֆլիսի վաճառանոցում ծախվող խոզի եւ գոմէշի միւս էժանացնել մէկ կօպէկով: Իսկ միւս մսերի գինը թողնել նախկինը:

Թիֆլիսում եղանակները սկսեցին զգալի կերպով ցրտել: Երէկ, յունվարի 4-ին, ամբողջ օրը գալիս էր ձիւն, որ հաստ շերտով ծածկել է քաղաքը:

Թիֆլիսի ներսիսեան դպրոցում այս ամսներին, այն է դեկտեմբերի 30-ին եւ յունվարի 3-ին, կայացաւ երկու աշակերտական ներկայացում նոյն դպրոցի ուսուցիչ Գ. Միրազեանի ղեկավարութեամբ: Առաջին անգամ խաղացին երկու վոլբլի, իսկ երկրորդ անգամ ծիծաղաշարժ «Կախարդված պրինց» անունով պիէսը: Երկու ներկայացումներն էլ խաղի կողմից աշող անցան:

Յունվարի 1-ին, գիշերվա 11 ժամին, Ալիւրի մէջդանի մօտ, Օհանէզովի տանը հրդեհ սկսվեց, որը մեծ սարսափ գցեց այդ տան մէջ ընկնող 30-ից աւելի հրէայ ընտանիքներին: Փողոցների նեղ լինելու պատճառով, հրդեհը չը կարողացան կանգնեցնել եւ սկսեցին հարեւան տներն եւս այրվել: Օհանէզովի տունը կատարեապէս այրվեց: Տունը ապահովված էր: Հրդեհի պատճառը յայտնի չէ:

Մեզ խնդրում են հաղորդել, որ յունվարի 7-ին, Վէտցիկ թատրոնում (Միքայէլեան փողոց) հայ բեմի բազմաշխատ դերասանների օր. Վարդուհին, մասնակցութեամբ դերասանների, կը տա մի հայերէն ներկայացում: Կը խաղան վրացերէնից թարգմանած «Սանտա» ուրախ պիէսը:

Ժանտախտի դէմ կուռղ Բարձրագոյն հաստատված յանձնաժողովը յայտարարում է, որ Զմիւռնիա քաղաքը եւ Միացման կղզին ժանտախտի կողմից անբարեխաղ չեն:

«Новости» քաղում է Վարչալայի լրագիրներից Հենրիկ Սենկիվիչի հետեւեալ նամակը: «Այս բոլոր վայրերին, քաղաքներին, գիտնական եւ հասարակական հիմնարկութիւններին, ընկերութիւններին, կլոբներին, խմբագրութիւններին եւ մասնաւոր անձերին, որոնք բարհաճեցին գործով կամ խօսքով մասնակցել իմ գրական գործունէութեան 25-ամեայ յօբելանի տօնին, ուղարկում եմ սրտագին եւ ջերմ շնորհակալութեան արտայայտութիւնը:

«Kreuz-Zeitung» լրագիրը հաղորդում է, որ ռումբիական միլիտար-նախագահ Կարպ այս օրերս ճանապարհ է ընկնում Բերլին՝ բանակ-

յում նրա վրա, նա բոլորովին մոռացել էր, որ այդ առաւօտ արդէն տեսել էր նրան զդեակի չըլակալքում:

—Ուզում եմ գնալ,—ասաց երեխան, փորը կշտացնելուց յետոյ:

Ժանինը յուզվեց եւ չէր ուզում թողնել, որ գնայ: Ո՛ւր պէտք է գնայ խեղճը, այդպէս թոյլ ու մոլը եւ այդպէս վատ հագնված, այդ մըրկալից գիշերը:

Բայց երեխան սկսեց լալ:

Այն ժամանակ նա գցեց նրա մէջքին իր հին բրդէ գլխաւորը, փաթեթեց մէջը երեխային, հագցրեց ոտներին իր նոր ոտնամանները, առաւուց խոտ լցնելով մէջը, որովհետեւ շատ մեծ էին փոքրիկի ոտներին, եւ բաց արեց դռնի դուռը: Զինապատ դաշտը ամբողջապէս չողջողում էր, լուսաւորված ամպերի մէջը:

—Գնա, հրէշտակ, Տէր ընդ քեզ,—ցաւելով ասաց նա:

Երեխան գրեթէ ծածկվել էր նրա աչքից, երբ նա վազվազ հասաւ յետեւիցը եւ ասաց. —Իմ անուրը Ժանին է, Հայրս կորել է: աղօթիք Աստուծուն, հոգեակս, որ վերադարձնի ինձ հայրիկիս:

Երեխան աչքերը յառեց նրա վրա, բայց ոչինչ չը պատասխանեց եւ վազելով գնաց ճանապարհի մէջով, որ իջնում էր դէպի Նեվիլի գիւղը եւ եկեղեցին:

IV

Հետեւեալ առաւօտեան, դեկտեմբերեան մը-

ցութիւններ ոկսելու ամերիկական «Standard Oil Company» նաւթարդինաբերական հոգաւոր ֆիրմայի ներկայացուցիչների հետ: Որքան յայտնի է, մտադրութիւն կայ Բուվինիայի նաւթաբեր հողերի չահագործութիւնը յանձնել յիշեալ ընկերութեանը: Եթէ մի այդպիսի համաձայնութիւն իսկապէս կայանայ, առաջ նաւթարդինաբերողները՝ յանձնի վերոյիշեալ ընկերութեան, վտանգաւոր մրցողների կը հանդիպեն: Բուվինական նաւթաբեր հողերի հարստութիւնը բաւական մեծ է, իսկ ֆիրմայի կազմակերպական ընդունակութիւնները լաւ յայտնի են:

«Новое Время» լրագրին Սեվաստոպոլից հեռագրում են հետեւեալը: «Առաջված են մասնաւորութիւններ, որոնցից երեւում է, որ մի չը լաված քանակութեամբ ձիւն է եկել եւ երկար ժամանակ խափանել է գնացքների երթեւեկութիւնը Կուրսկ-Սեվաստոպոլիս եւ Հարաւ-արեւմտեան երկաթուղիների վրա: Դէպքեր եղան, որ գնացքները մի շաբաթով կանգ առան: Հաւաքվեցին մօտ 10 գնացքներ երեք հազար ճանապարհորդներով: Սեվաստոպոլիս ճանապարհի վրա բանտրները մտքերեցին ճանապարհը Երրորդ օրը սկսվեց երթեւեկութիւնը. ճանապարհորդները օտիպվեցին Մանիան տօնները անցկացնել ձիւնակոյտերում. ուտում էին այն, ինչ որ հասցնում էր կայարանի վարչութիւնը: Օդեսայի կայարանում նայնպէս արդէն հինգերորդ օրն է, որ հարիւրաւոր հասարակ մարդիկ են ապրում եւ իրար սպասում են գնացքների ճանապարհը ընկնելուն, շատերը իրանց ունեցած չուսեղածը ծախել են եւ այժմ թշուառ զրուկեան մէջ են: Զների մէջ կանգ առած գնացքներում գտնվում էին բազմաթիւ ուսանողներ, որոնք տուն էին գնում Մանիան տօներին»:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ դեկտեմբերի 28-ին, Պետերբուրգի նահանգական դատարանի շինութիւնից գողացվել է երկաթէ դրամարկը, որի մէջ պահված էին 10,000 ռ. առձեռն դրամ՝ եւ տոկոսաբեր թղթեր: Նոյն օրն եւ ի՞նչ նահանգապար ղեկավարների գանձարանում գտան անյայտ անձի ձեռքով բերված մի ծրար 3000 ռ. գումարի տոկոսաբեր թղթերով, որոնք պահվում էին գողացված արկղի մէջ:

ՇՈՒՇՈՒՅԹ մեզ գրում են. «Ընչդ մի տարի փակ մնալուց յետոյ, նախկին հայոց Բարեգործական ընկերութեան Շուշու ձիւղի գրադարան-ընթերցարանի դռները, վերջապէս, այսօր վերաբացվեցին քաղաքային վարչութեան ձեռքով: Դեկտեմբերի 31-ին, ժամը 1-ին մաղթանք կատարեց ընթերցարանի դռնիցնում ռուս, հայ եւ թուրք հոգեւորականութիւնը: Ներկայ էին քաղաքային վարչութեան անդամները եւ ուրիշ բարձրաստիճան անձինք: Բեռնի վարդապետը ճառ արտասանեց, բացատրե-

րին, դանդաղ առաջ էր գնում Պոկակի ու Նեվիլի մէջը ճանապարհով:

Ձախաղանց յոգնած էր երեւում նա, այնքան յոգնած, որ, չը նայելով ցրտին, մի օպէ նստեց ճանապարհի կողքին դարձած խճաքաբերի կոյտի վրա եւ, գլուխը երկու ձեռքով բռնելով, խոր մտածմունքի մէջ ընկաւ:

Հետզհետէ բարձրացող արեւը դուրս բերեց նրան իր մտախռովութիւնից:

Նա բարձրացրեց գլուխը եւ տեսաւ, որ առջեւ մի երեխայ է կանգնած, գանգրահեր ու չէկ եւ հաղիւ ծածկված կեղտոտ ցնցոտիներով: Ուղեւորի առաջ կանգնած՝ նա հետաքրքրեալմբ գնում էր նրան: Նրանցից ոչ հեռու երեւում էր թափառական բօշա ծաղրածուների ֆուրգօնը: Ուղեւորը հասկացաւ, որ իր առջեւ կանգնած է այդ ֆուրգօնում ապրող բօշալիկի երեխաներից մէկը:

—Է՛հ, չնչնաց նա, արանից յոյս չը կայ բան իմանալու:

Եւ ախ քաշելով, բացականչեց,—«Ինչպէս պէտք է կարողանամ գտնել իմ կնոջը, իմ փոքրիկ Ժանինին»:

—Նանիկն,—կրկնեց երեխան: Նա բռնեց անձանթի ձեռքից եւ ստիպեց վեր կենալ տեղից, յամառութեամբ կրկնելով. —Նանին, հա, Նանին:

V

Ձախաղանց ուղեւորը գնաց նրա յետեւից եւ ձիւնապատ դաշտերով հասաւ բուրբ գագաթին:

Բայց Ժանինից ամենքը դեռ քնած էին:

Լով գրադարան-ընթերցարանի նշանակութիւնը: Ապա քաղաքային վարչութեան անդամ Սաֆարալիէիով շնորհաւորեց ընթերցարանի բացումը եւ հրաւիրեց անդամ գրվելու: Առաջմ կիսամեակի համար ստանում են 3 ռուբլի, դուցէ այդ գումարը կը լինի տարվայ վճարը: Պատասխանատու անձ ընտրված է պ. Մէլիք-Յովսէփեան, իսկ գրադարանապետ պաշտօնը ստանձնել է պ. Ս. Մղունեանց, մի կնիսեղի-զէնտ երիտասարդ, ամսական 30 ռ. ռոճիկով»:

ՇՈՒՇՈՒՅԹ մեզ գրում են. «Սովորական տօնածառերը այս տարի տեղի չեն ունենայ մեզանում, երեխաների հիւանդութիւններ չը տարածելու համար: Ինֆլուէնցա հիւանդութիւնն էլ տարածվեց մեր քաղաքում, մանաւանդ հասակաւորների մէջ, բայց, բարեբաղդաբար, անվտանգ է անցնում»:

Սմբադրութիւնը շնորհակալութիւն է յայտնում այն բոլոր անձանց, որոնք նոր-տարվայ տօների առթիւ մեր խմբագրութեանը ուղարկել են շնորհաւորութիւններ եւ համակրական բարեմաղթութիւններ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԿԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Վան, դեկտեմբերի 19-ին
Առաջնորդական տեղապահ Սահակ վարդապետ, իր ֆիզիքական տկար կազմութեամբ պատճառաւ՝ բարդական տկարութիւն ալ կուսնենայ օրէ օր, ըստ որում քաղաքական ու կրօնական ժողովները իրենց կանոնաւոր նիստերն ու գործունէութիւնները խանգարած՝ կաղն ի կաղը կերթան. աղոյսմէ ծնունդ առած է կարգ մը թաղականներու անխանոսութիւնը, դպրոցներու խեղճ վիճակը, հոգաբարձուներու եւ թաղական ժողովներու միջեւ առաջացած կուսակցական կոնֆլիկտը, պայքարները՝ որոնք միշտ վնաս մը ունին իրենց ետեւ իբր պահակ:

Ու ասոնց մէջէն ուրախալի կէտեր ալ կը նշմարվին, որոնք մեր իսկական միւլթարութիւններն են այս յետ ընկած մութ անկիւններուն մէջ: Աղոյս կարգէն են մեր որբերուն գործերը, վարդապ որբանոցի հոգաբարձութիւնը կախաւոր լաւ լաւ անօրինութիւններով իրեն խնամոց յանձնված որբերը աւելի լաւ խնամել: Հոգաբարձութեան ատենապետը, Մ. Պետրոս աղա Գափամաշլեան, անխնայ եռանդով ու անձուիրաբար կախաւոր, իր վայելած ընդարձակ համարումով հոգաբարձութեան հոգին է, ուղն ու ծուրը կը կազմէ: Վերջերս վանքին մէջ շարժական բաղնիք մը հաստատած են, որով որբերը միշտ միջոց կունենան լուսնգլելու ու մաքրվելու:

Կարծէ գովասանքով յիշել նաեւ Ս. Գրիգորի որբանոցի հոգաբարձուներու գործունէութիւնն ալ, որ օրինակելի կրնայ համարվի: Այս դեկտեմբերէն սկսեալ 25 նոր որբունիներ եւս աւե-

ղեակում Ժանինը անքուն էր անցրել գիշերը եւ լուսաբացին շտապել էր տեսնելու, թէ ինչ կայ դրած իր հին ոտնամաններում, որ նոր ոտնամանների տեղ օրել էր բուխարու մօտ:

Ոտնամանները դատարկ էին:

Ի՞նչ մի բան: Դո՛ւն մի չնչին բան լինէր մօրը ուղարկելու համար: Ո՛ւր գիտէ, գուցէ նա բարկացրել է իր տիրուհուն կամ Աստուծուն, որ փնտես անքաղաքավարութիւն էր ուրիշին ընծայել ստացած ընծան:

Ժանինը չէր զղչում իր արածի համար, բայց այնուամենայնիւ սկսեց լալ:

Յանկարծ խօսակցութեան ձայն լսվեց բաւկից, եւ նա սկսեց ականջ դնել: Դռանը մօտեցնում էին փայտէ քօշեր հագած փոքրիկ ոտներ զայլեր եւ մի երեխայական ձայն կրկնում էր.

—Նանինը այստեղ է... Այստեղ է Նանինը:

Նա հետաքրքրվեց ու բաց արեց դուռը եւ նրա կրծքից դուրս պրծաւ ցնծութեան աղաղակը.

—Հայրիկ:

Անձանթ ուղեւորը գրկեց նրան եւ բերկրութեան արտասուքներ երկար ժամանակ թրջում էին նրա գլուխը:

Իսկ յիշանք երեխան այդ ժամանակ, սոյթ-թաքելով, բայց առանց ընկնելու, իջնում էր լարծուն ճանապարհով դէպի իրանց շաբթական տունը, որ պատասխանում էր ճանապարհ ընկնել դէպի անյայտ երկրներ:

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27